Վիրահայոց թեմի Բաթումի «Ալեքսանդր Մանթաշյանց» կենտրոնի տնօրեն
Սոնա Հովհաննիսյանը ծնվել է1985թ. մարտի 5-ին, Վաղարշապատ քաղաքում:
1992-2002թթ. սովորել և ավարտել է Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցը:
2002թ. ընդունվել է Երևանի Խ.Աբովյանի անվան Պետական Մանկավարժական համալսարանի <<Մանկավարժության և Հոգեբանության>> ֆակուլտետը:
2007թ. ավարտել է վերոհիշյալ համալսարանը՝ ստանալով մանկավարժ-հոգեբանի և իրավաբան-հոգեբանի որակավորում: Ունի մագիստրոսի կոչում:
2007-2009թթ. աշխատել է Վաղարշապատ քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցում՝ մանկավարժ-հոգեբան:
2007-2008թթ. <<Այգ>> հոգեբանական ծառայության կենտրնում մասնակցել է հոգեբանական թրեյնինգների, սեմինարների:
2009-2014թթ. աշխատել է Վիրահայոց թեմի ք. Բաթումիի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու Մեսրոպ Մաշտոցի անվան կիրակնօրյա դպրոցում:
2013թ. <<Սուրբ Փրկիչ>> եկեղեցուն կից ձևավորել է <<Հեղնար>> պարային խումբը և << Անուշ>> տիկնանց միությունը:
2015թ.-ից Վիրահայոց թեմի առաջնորդի տնօրինությամբ նշանակվել է քաղաք Բաթումի Ալ.Մանթաշյանցի անվան կրթամշակութային և երիտասարդական կենտրոնի տնօրեն:
Տիրապետում է հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներին:
Ամուսնացած է, ունի ամուսին և երկու դուստր: